Հաստատում եմ

ՀՊՄՀ ռեկտոր՝ _____Ռ. Միրզախանյան

Վերահաստատում եմ

ՀՊՄՀ ռեկտոր՝—----------Ս. Գևորգյան

2022թ.

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ՝ ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

ԲԱԿԱԼԱՎՐԻ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

Կրթական ծրագրի մասնագիրը (ԿԾ), նախատեսված է դիմորդների, ուսանողների, ակադեմիական անձնակազմի, շահակիցների և գործատուների համար: Այն տրամադրում է ծրագրի հիմնական հատկանիշների համառոտ ամփոփումը՝ իր մեջ ներառելով ուսումնառության նախատեսվող վերջնարդյունքները, մանրամասն տեղեկություններ ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդների, արդյունքների և յուրաքանչյուր մոդուլի համառոտ բովանդակության մասին:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ՝ ԿԵՐՊԱՐՎԵՍՏ
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Կրթական ծրագրի անվանումը և մասնագիտության թվանիշը	Մասնագիտական մանկավարժություն՝ կերպարվեստ, 011401.11.6
2. Որակավորումների ազգային շրջանակի մակարդակ	Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակ
3. Շնորհվող որակավորումը	Մանկավարժության բակալավր
4. Կրեդիտների քանակը	240 (երկուհարյուր քառասուն)
5.Բարձրագույն ուսումնական հաստատություն	ՀՊՄՀ
6. Կրթական ծրագիրը իրականացնող ֆակուլտետ	Գեղարվեստական կրթություն
7. Կրթական ծրագրի հիմնական սպասարկող ամբիոն(ներ)	Կերպարվեստ
8. Կրթական ծրագրի ուսուցման լեզու	Հայերեն
9. Կրթական ծրագրի ուսուցման ձևը և ուսումնական պլանները	Առկա/հեռակա
10. Կրթական ծրագիրը հավատար մագրված/լիցենզավորված է՝	Լիցենզավորված է ՀՀ ԿԳՆ-ի կողմից

11. Կրթական ծրագրի ընդունելության չափանիշները (մուտքի պայմաններ):
Ընդունելությունը կատարվում է՝ ըստ ՀՀ կառավարության հաստատած Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի: Ուսուցումը երկաստիճան է՝ **բակալավրիատ և մագիստրատուրա**: «Կերպարվեստ» մասնագիտական կրթական ծրագրի շրջանավարտները ստանում են մանկավարժության բակալավրի որակավորում «կերպարվեստ» մասնագիտությամբ: Բակալավրիատի ուսուցման տևողությունը չորս տարի է: Կերպարվեստի բաժին կարող են ընդունվել նրանք, ովքեր ունեն ընդհանուր միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթության վկայական, ունեն նկարչական ունակություններ ու հմտություններ, որոնք համապատասխանում են ընդունելության քննությունների պահանջներին: Դիմորդը պետք է հանձնի մասնագիտությունից երկու քննություն՝ **«Գծանկար» և «Գունանկար»:** «Գծանկար» առարկայի քննության ժամանակ հանձնարարվող առաջադրանքը նատյուրմորտ է՝ հարթ ֆոնի վրա 2-3 գիպսե առարկաներից, գրաֆիտե մատիտով պարզ լուսավորությամբ՝ Ա2 (594x420) ֆորմատի թղթի վրա: Հանձնարարության կատարմանը տրվում է 8 ակադեմիական ժամ 2 օր՝ 4-ական ժամ: «Գունանկար» առարկայի քննության ժամանակ հանձնարարվում է 3-4 կենցաղային առարկաներից կազմված նատյուրմորտ, ջրաներկով Ա2 (594x420) ֆորմատի թղթի վրա, ցերեկային լուսավորության պայմաններում, կատարման տևողությունը՝ 8 ակադեմիական ժամ (2 օրում՝ 4-ական ժամ):

Ներկայացվող պահանջները՝
«Գծանկարից»՝ բնօրինակից ճիշտ տեղադրումը թղթի վրա, համաչափությունների ճշգրիտ արտահայտում, տրված լուսավորության պայմաններում արտահայտել ծավալները և տալ բնօրինակի նմանության բնութագիր:
«Գունանկարից»՝ բնօրինակից ճիշտ տեղադրումը թղթի վրա՝ գունային, տոնային և ծավալային հարաբերությունների ճշգրիտ արտահայտումը տարածության մեջ և տալ բնօրինակի նմանության բնութագիր:
Քննության ներկայանալիս դիմորդը իր հետ պետք է ունենա.
1. Նկարչական տախտակ Ա2 ֆորմատի թղթի համար (60x40 սմ),
2. Նկարչական Ա2 ֆորմատի 2 թերթ (Գծանկարի և գունանկարի համար),
3. Գրաֆիտե սև մատիտներ՝ չոր, միջին և փափուկ տեսակների,
4. Ռետին, սրիչ, կոճգամներ,
5. Ջրաներկ, ջրաներկի վրձիններ՝ տարբեր չափերի, փորձաթղթեր, ջրամաններ:

011401.11.6 «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ
«ԳԾԱՆԿԱՐ»
1. Թղթի մեջ առաջադրանքի ճիշտ տեղադրում և չափի որոշում: 0-5 միավոր
2. Առաջադրանքի կազմող առարկաների և նրանց մասնիկների համաչափությունների արտահայտում: 0-5 միավոր
3. Աշխատանքում լուսաստվերային, ծավալային խնդիրների և հեռանկարի արտահայտում: 0-5 միավոր
4. Առաջադրանքը կազմող առարկաների նյութականության արտահայտումը և գրաֆիկական կատարողական կուլտուրան: 0-5 միավոր
Ընդամենը 20 միավոր
«ԳՈՒՆԱՆԿԱՐ»
1. Թղթի ֆորմատի և դիրքի ճիշտ ընտրությունը ըստ առաջադրանքի և առարկաների փոխհարաբերության խնդիրների լուծումը: 0-5 միավոր
2. Առաջադրանքում ընդհանուր գունային գամմայի ճիշտ ընտրությունը (կոլորիտ): 0-5 միավոր
3. Նյութականության և գունային լուծումների ճիշտ արտահայտում: 0-5 միավոր
4. Կատարողական կուլտուրան և նյութի հետ վարվելու վարպետությունը: 0-5 միավոր
Ընդամենը 20 միավոր
011401.11.6 «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ
1-ին քննություն-«Գծանկար»
2-րդ քննություն-«Գունանկար»
Երկու քննությունների ընթացակարգերը նույնատիպ են: Քննությունները անցկացվում են յուրաքանչյուր երկու օրում 4-ական ակադեմիական ժամ տևողությամբ:
Տվյալ օրվա քննության բոլոր դիմորդները քննասենյակներում իրենց տեղերը զբաղեցնում են վիճակահանությամբ: Երկրորդ օրվա քննության ավարտից հետո բոլոր աշխատանքները հավաքվում, ծածկագրվում են պատասխանատու քարտուղարի կողմից և հանձնվում առարկայական քննական հանձնաժողովի նախագահին գնահատման համար:
Գնահատման ավարտից հետո կատարվում է աշխատանքների ապածածկագրում և գնահատականները փոխանցվում են քննական ամփոփաթերթի մեջ:

12. Կրթական ծրագրի կառուցվածքը և նկարագիրը

Բակալավրի ծրագիրը բաղկացած է 5 հիմնական կրթամասերից՝
ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսական (առկա բակալավրը՝ 42 կրեդիտ աշխատածավալով, իսկ հեռական բակալավրը՝ 38 կրեդիտ աշխատածավալով), մաթեմատիկական և բնագիտական (առկա և հեռակա բակալավրը՝ 8 կրեդիտ աշխատածավալով), մանկավարժական և հոգեբանական (առկա և հեռակա բակալավրը՝ 14 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր և հատուկ մասնագիտական (առկա և հեռակա բակալավրը՝ 146 կրեդիտ աշխատածավալով) ինչպես նաև այլ կրթական մոդուլներ (առկա բակալավրը՝ 30 կրեդիտ աշխատածավալով, իսկ հեռական բակալավրը՝ 34 կրեդիտ աշխատածավալով):
1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսական կրթամաս (առկա՝ 42 կրեդիտ, հեռակա՝ 38)
Պարտադիր դասընթացներ (առկա՝ 38 կրեդիտ, հեռակա՝ 34)
Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ / մոդուլ/, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:
Կամընտրական դասընթացներ (առկա և հեռակա՝ 4 կրեդիտ)
Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ/ մոդուլ/:
2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս (առկա և հեռակա՝ 8 կրեդիտ)
Պարտադիր դասընթացներ (առկա և հեռակա՝ 8 կրեդիտ)
Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ / մոդուլ/, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մաթեմատկական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:
3. Մանկավարժական և հոգեբանական կրթամաս (առկա և հեռակա՝ 14 կրեդիտ)
Պարտադիր դասընթացներ (առկա և հեռակա՝ 12 կրեդիտ)
Կամընտրական դասընթացներ (առկա և հեռակա՝ 2 կրեդիտ)
Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ / մոդուլ/, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մանկավարժական և հոգեբանական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:
4. Ընդհանուր և հատուկ մասնագիտական կրթամաս (առկա և հեռակա՝ 146 կրեդիտ)
Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը:
Պարտադիր դասընթացներ (առկա և հեռակա՝ 142 կրեդիտ)
Կամընտրական դասընթացներ (առկա և հեռակա՝ 4 կրեդիտ)
Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ կամընտրական մասնագիտական դասընթացներ/ մոդուլ/:
5. Կրթական այլ մոդուլներ (առկա՝ 30 կրեդիտ, հեռակա՝ 34)
Կուրսային աշխատանք (առկա և հեռակա՝ 4 կրեդիտ)
Ծրագրի այս հատվածում նախատեսվում է 2-ական կրեդիտ աշխատածավալով 2 կուրսային աշխատանքի կատարում:
Մանկավարժական պրակտիկա (առկա և հեռակա՝ 18 կրեդիտ)
Նախատեսում է դասավանդում դպրոցում, որի նպատակն է բալալավրերի մանկավարժական փորձի ձեռքբերումը:
Ամփոփիչ ատեստավորման նախապատրաստում (առկա՝ 2 կրեդիտ. հեռակա՝ 4 կրեդիտ)
Ամփոփիչ ատեստավորում (առկա՝ 6 կրեդիտ, հեռակա՝ 8 կրեդիտ)
Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է տեսական և գործնական մասնագիտական գիտելիքների,կարողությունների և հմտությունների ստուգումը ըստ կրթական ծրագրի վերջնարդյունքների:

13. Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է պատրաստել բակալավրի աստիճանում «Կերպարվեստ» մասնագիտությամբ մանկավարժ մասնագետներ, որոնք կունենան.

1. մանկավարժության, արվեստի, մասնավորապես՝ կերպարվեստի, գեղարվեստական մանկավարժության, մանկավարժական գործունեության մեթոդաբանության վերաբերյալ հիմնարար և բազմակողմանի գիտելիքներ,
2. հոգեբանամանկավարժական կարողություններ և հմտություններ, մեթոդական պատրաստվածություն, որոնք անհրաժեշտ են արդյունավետ մանկավարժական և ստեղծագործական գործունեություն իրականացնելու, «Կերպարվեստ» առարկան դասավանդելու և ուսումնառությունը շարունակելու, ինքնակթության, ինքնաարտահայտման, կատարողական արվեստի վարպետության համար:

14. Ծրագրի կրթական ելքային արդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Ա1.Ներկայացնել, մեկնաբանել ՀՀ կրթության քաղաքականությունը, մշակույթի, կրթության, մասնավորապես հանրակրթության բնագավառներին վերաբերող օրենքները, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերը (հանրակրթության չափորոշիչ, առարկայական («Կերպարվեստ») չափորոշիչ և ծրագիր, ուսումնական պլան), ինչպես մայրենի, այնպես էլ օտար լեզվով

Ա2. Ներկայացնել անձին որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտ, նրա հոգեբանամանկավարժական, անատոմիաֆիզիոլոգիական, էկոլոգիական և զարգացման տարիքային առանձնահատկությունները, սոցիալականացման օրինաչափությունները, այդ գործընթացի վրա ազդող ներքին (հոգեբանական) և արտաքին (ազգային, համամարդկային, սոցիալ- մշակութային, տնտեսական) գործոնները

Ա3. Կիրառել մասնագիտական մանկավարժական գործընթացում սովորողների գնահատման համակարգի մեթոդաբանությունը, պահանջները և արձանագրել առաջընթացի գրանցման կարևորությունը՝ որպես դասավանդման գործընթացի արդյունավետության ցուցիչ

Ա4. Մեկնաբանել մանկավարժի, մասնավորապես՝ «Կերպարվեստ» առարկայի ուսուցչի մասնագիտության հիմնական բովանդակությունը, մասնագիտական գործունեության կառուցվածքը, գործառույթները, տարբեր մասնագետների, սոցիալական ինստիտուտների և ծառայությունների, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության բովանդակությունը, իրականացման ուղիները

Ա5. Մեկնաբանել մանկավարժական տեսությունների զարգացման պատմությունը, պատմական փաստերը, կրթության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, միջգիտակարգային, միջառարկայական կապերը (հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական) և հարաբերությունները, միջմշակութային հաղորդակցման առանձնահատկությունները, հայ կրթական մտքի պատմության, կրթական համակարգերի զարգացման փուլերը, ուսուցման կազմակերպման ձևերը (այդ թվում նաև ներառական), կրթության որակի չափորոշիչները

Ա6. Մեկնաբանել գրաֆիկական, գեղանկարչական, քանդակագործական աշխատանքներ ստեղծելու մեթոդաբանությունը, թվային գործիքների օգտագործման առանձնահատկությունները, սկզբունքները, տեխնիկան, հնարքները ու դրանց կիրառման մանկավարժական պայմանները

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Բ1. Կազմակերպել դասավանդողի և ուսումնառողի համատեղ գործունեությունը՝ ապահովելով սուբյեկտ-սուբյեկտային փոխհարաբերություններ, արդյունավետ մանկավարժական հաղորդակցում հանրակրթական դպրոցի «Կերպարվեստ» առարկայի չափորոշիչով և ծրագրով նախատեսված հմտությունների ձևավորման գործընթացում

Բ2. Ձևակերպել «Կերպարվեստ» առարկայի չափորոշիչով և ծրագրով նախատեսված թեմաներով դասերի նպատակները, պլանները, կիրառել դրանց համապատասխան փոխներգործուն մանկավարժական մեթոդներ ու տեխնոլոգիաներ, իրականացնել նախագծային ուսուցում, ուսումնական հետազոտություններ, ինչպես մայրենի, այնպես էլ օտար լեզվով

Բ3. Կիրառել մասնագիտական մանկավարժական գործընթացում սովորողների գնահատման համակարգի մեթոդաբանությունը, պահանջները և արձանագրել առաջընթացի գրանցման կարևորությունը՝ որպես դասավանդման գործընթացի արդյունավետության ցուցիչ

Բ4. Կիրառել ժամանակակից մանկավարժական, տեխնիկատեխնոլոգիական, ուսուցման արդյունավետ ռազմավարություններ և մեթոդներ, հիմնարար սզբունքներ՝ կազմակերպելով մանկավարժական գործընթաց համընդհանուր ներառականության պայմաններում՝ օգտագործելով «Կերպարվեստ» առարկայի դասագործընթացում կրթության որակի ապահովման չափանիշներն ու չափորոշիչները

Բ5. Կիրառել կերպարվեստի ուսուցման ժամանակակից մեթոդաբանության հիմնադրույթները՝ համապատասխանեցնելով Հայաստանում և արտերկրում արվեստի, մասնավորապես կերպարվեստի ուսուցման արդի մոտեցումները, հոգեբանամանկավարժական, կրթության փիլիսոփայական ուսմունքների հիմնարար դրույթները և մեթոդները՝ հիմք ընդունելով կերպարվեստի ուսուցման/դասավանդման բազմադարյա ազգային ավանդույթները և պատմական նախադրյալները

Բ6. Կիրառել «Կերպարվեստ» առարկայի դասագործընթացում սովորողների ստեղծագործական կարողությունների, գեղագիտական ճաշակի ձևավորման ու զարգացման մանկավարժական, առողջապահպան տեխնոլոգիաներ՝ ապահովելով դասավանդման գործընթացի որակը, առաջընթացը և սովորողի մասնագիտական աճը

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝

Գ1. Ցուցաբերել նախաձեռնություն, ուսումնական գործընթացը, խումբը կառավարելու կարողություններ ու գործառույթներ (պլանավորում, կազմակերպում, ղեկավարում, վերահսկում)՝ դրսևորելով ստեղծագործական մոտեցում տարբեր մարտահրավերների ժամանակ, պահպանելով մարդու իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող վարվեցողության, անվտանգության կանոնները և իրավական նորմերը

Գ2. Կիրառել մանկավարժական մասնագիտական աշխատանքում առողջ ապրելակերպի, առողջության պահպանման գիտելիքներն ու կարողությունները և կրթության առանձնահատուկ կարիքներով սովորողների հետ աշխատանքի կազմակերպման մեթոդաբանությունը

Գ3. Օգտվել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից, ծրագրերից (*Word*, *Excel*, *PowerPoint*, *CorwelDraw*, *Photoshop* և այլն)՝ պահպանելով տեղեկատվական աղբյուրների օգտագործման բարոյական և իրավական նորմերը, ակադեմիական ազնվության չափանիշները

Գ4 Կառուցել գրավոր և բանավոր խոսքը (մայրենի և օտար լեզվով)՝ դրսևորելով հոգեբանամանկավարժական պատշաճ գրագիտություն

15. Գնահատման մեթոդներ

«Կերպարվեստ» կրթական ծրագրի գնահատման մեթոդաբանությունը հենված է ուսանողների կարողությունների և կրթական ելքային արդյունքների վրա, նպատակ ունենալով խրախուսել և զարգացնել ուսանողների մոտ ստեղծագործական, ինքնուրույն աշխատանքի և քննադատական մտածելակերպի հմտությունները: Դասախոսությունների վրա հիմնված առարկաները, հիմնականում գնահատվում են գրավոր քննություններով և առաջադրանքներով: Գործնական/Լաբորատոր դասընթացների գնահատման համակարգը՝ ուսանողների լաբորատոր, ստուգողական և գրավոր աշխատանքների և ելույթների վրա: Ընդհանրության մեջ ուսանողի առարկայական աշխատանքը գնահատվում է՝ էսեյների, հանձնարարականների /ռեֆերատ/, բանավոր ներկայացվող պրեզենտացիաների, սեմինարների,թեսթերի և հետազոտական, վերլուծական աշխատանքների միջոցով:
Մանկավարժական պրակտիկան գնահատվում է՝ օգտագործելով ուսանողի ստացած գիտելիքները (տեսական և գործնական) ուրույն մեթոդիկայի կիրառմամբ:
Ուսումնական պրակտիկան գնահատվում է հանձնաժողովի կողմից ուսանողի կատարած աշխատանքների ցուցադրության միջոցով:
Գնատման մանրամասները տես՝ ՀՊՄՀ ուսանողների գիտելիքների գնահատման կարգում: http://aspu.am/

16. **Ուսուցման և դասավանդման մոտեցումներ**

Ուսուցումն իրականացվում է խմբային և հոսքային ձևաչափերով, իսկ սեմինար, գործնական, հետազոտական աշխատանքները և պրակտիկան ներառել են ձևավորված փոքրաթիվ խմբեր: Դասավանդման մեթոդները խրախուսում են ուսանողակենտրոն մոտեցում ուսուցման բոլոր փուլերում՝ խրախուսելով ուսանողի անհատական զարգացումը, մասնագիտական կարողությունների համաչափ աճը, մասնագիտական տեղեկատվության ձեռքբերման հարցում վերջինիս ինքնուրույնությունը, ինչպես նաև անհատական վերլուծական ունակությունները և քննադատական մտածողությունը: Ուսուցման և դասավանդման մոտեցումներն ապահովում են գիտելիքների աստիճանական ավանդում՝ ըստ բարդության, ինչպես նաև հմտությունների և կարողությունների անընդմեջ զարգացում՝ ըստ մասնագիտական կայացման հիմնական պահանջների:
Դասավանդումն իր մեջ ներառում է դասախոսություններ, սեմինարներ, գործնական /անհատական/ պարապմունքներ, խորհրդատվություն և գործնական դասընթացներ:
Դասախոսություններ – ընդլայնված և համահունչ փաստերի հաջորդականության ներկայացման հնարավորություն,
Սեմինարներ – խմբային և անհատական ստեղծագործականի, քննարկումների և անդրադարձի թողարկում, քննադատական մտածողության զարգացում,
Գործնական պարապմունքներ – փորձարարության և թեմայի, փաստաթղթերի և նյութերի վերլուծության և քննարկման հնարավորություն,
<u>Աջակցվող ինքնուրույն ուսում՝ ընթացիկ նյութերի օգտագործմամբ</u> – Անհատական հետազոտության և զարգացման աջակցում,
<u>Անհատական խորհրդատվություն</u> – Ինքնուրույն ուսման ավելի ընդլայնված, խոր վերլուծության և աջակցության հնարավորության տրամադրում:

17. **Ուսումնական պլանի քարտեզը**

Տես կցված հավելված 2

18. **Մասնագիտական գործունեության ոլորտներ**

- Հանրակրթական դպրոցներում որպես ուսուցիչ:
- Մանկական գեղարվեստական կենտրոններում որպես խմբակի ղեկավար:
- Գեղարվեստի ուսումնարաններում և վարժարաններում որպես ուսուցիչ:
- ՀՀ նկարիչների միության անդամ:
- Բարձրագույն ուսումնական հաստատություններում որպես դասախոս:

19. Կրթական չափորոշիչները կամ ծրագրային կողմնորոշիչները, որոնք օգտագործվել են ծրագիրը մշակելիս

Ծրագիրը մշակելիս դիտարկել ենք ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթական դպրոցի 01.12.14 ՀՕ-200-Ն կերպարվեստ առարկայի կրթական չափորոշիչները և ծրագրերը,
Կատարվել է բենչմարկ Երևանի Գեղարվեստի ակադեմիայի Գեղանկար, Գրաֆիկա, Քանդակ մասնագիտությունների կրթական ծրագրերի, Գերցենի անվան ռուսական պետական մանկավարժական համալսարանի կրթական ծրագրերի, ինչպես նաև Սանկտ-Պետերբուրգի Ի. Ե. Ռեպինի անվան պետական գեղանկարչության, քանդակկագործության և ճարտարապետության ակադեմիական ինստիտուտի կրթական ծրագրերի հետ:
Բենջամին Բլումի տաքսոնոմիայից:
ՀՀ «Բարձրագույն կրթության» մասին օրենքը՝ ընդունված է 2004 թվականի դեկտեմբերի 14-ին:
Հայաստանի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակի 2011 թվականի մարտի 31-ի N 332-Ն որոշման հիման վրա:
Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների կրթական 6-րդ մակարդակի հիման վրա:

20. «Կերպարվեստ» ԲԿԾ-ի շրջանակներում դասախոսական կազմի որակավորմանը և մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները

Դասավանդողները պետք է ունենան՝
ա. **արվեստի պատմության և տեսության խորը իմացություն**՝ սա ներառում է արվեստի տարբեր շարժումների, ոճերի, տեխնիկայի և՛ մշակութային, և՛ սոցիալական համատեքստի մասին համապարփակ գիտելիքներ, բարձրագույն մասնագիտական կրթություն համապատասխան ոլորտում,
բ. **արվեստի ուսուցման մեթոդաբանության, տեխնիկայի տիրապետում**՝ դասախոսը պետք է աշխատանքի փորձ ունենա արվեստի տարբեր մեթոդներով և միջոցներով, ներառյալ թվային մեդիան, որը թույլ կտա նրանց ցուցադրել և սովորեցնել դրանք ուսանողներին,
գ. **մասնագիտամանկավարժական փորձ**՝ դասավանդողը պետք է կարողանա մշակել արդյունավետ դասի պլաններ, որոնց իրագործման գործընթացում կներգրավեն բոլոր ուսանողներին՝ խթանելով քննադատական մտածողությունը, ստեղծագործական ունակությունները,
դ. **տեխնոլոգիաների իմացություն**՝ տեխնոլոգիան զգալի դեր է խաղում գեղարվեստական կրթության մեջ, և դասախոսը պետք է տիրապետի ոլորտում օգտագործվող տարբեր ծրագրային ապահովումներին, սարքավորումներին և թվային գործիքներին: Նրանք պետք է կարողանան օգտագործել տեխնոլոգիան թվային արվեստ ստեղծելու, լսարանում ուսումնառությունը բարելավելու և ուսանողների հետ շփվելու համար,
ե. **հաղորդակցման հմտություններ**. դասախոսը պետք է տիրապետի հաղորդակցման գերազանց հմտություններին՝ ուսանողներին բարդ գաղափարներ և հասկացություններ պարզեցված և նպատակային, արդյունավետ փոխանցելու համար: Պետք է կարողանա հաղորդակցվել բոլոր ձևերով,

զ. **ստեղծագործականություն և նորարարություն՝** դասախոսը պետք է ստեղծագործ և նորարար լինի իր դասավանդման մեթոդներում՝ ուսանողներին ոգեշնչելու և ակտիվ ներգրավելու համար: Պետք է կարողանա ստեղծել դինամիկ և խթանող ուսումնական միջավայր,

է. **համագործակցություն և թիմային աշխատանք՝** դասախոսը պետք է կարողանա համագործակցել այլ ուսանողների, դասախոսական կազմի այլ անդամների և վարչական, ուսումնաօժանդակ անձնակազմի հետ՝ շարունակաբար բարելավելու ուսանողների ուսումնառության գործընթացը: Պետք է կարողանա համագործակցել տարբեր գերատեսչությունների և համայնքային գործընկերների հետ,

թ. **մշակութային իրավահավասարություն՝** դասախոսը պետք է խորը վերլուծի մշակութային բազմազան տեսակետները և կարողանա դրանք ներառել իր մասնագիտական գործունեության մեջ: Նա պետք է կարողանա արձագանքել ուսանողների առանձնահատուկ կարիքներին և խթանել մշակութային փոխըմբռնումը,

ժ. **մասնագիտական զարգացում՝** 21-րդ դարի դասախոսը պետք է հավատարիմ լինի շարունակական մասնագիտական կարողությունների ու հմտությունների զարգացմանը՝ ոլորտի միտումների հետ համաքայլ ընթանալու համար: Այն ներառում է կոնֆերանսների, սեմինարների և մասնագիտական զարգացման այլ հնարավորություններին ակտիվ մասնակցություն:

ի. **առաջնորդության հմտություններ՝** դասախոսը պետք է կարողանա առաջնորդել ուսանողներին: Նա պետք է կարողանա առաջ մղել արվեստը և մշակութային իրադարձությունները ինչպես համալսարանում, այպես էլ համայնքում՝ օրինակելի լինելով ուսանողների համար,

լ. **հարմարվողականություն և ճկունություն՝** դասախոսը պետք է հարմարվողական և ճկուն լինի իր դասավանդման գործընթացում: Նա պետք է կարողանա հարմարեցնել ուսուցման իր ռազմավարությունները՝ հիմնվելով հետադարձ կապի վրա և գնահատելով դրանց արդյունավետությունը:

խ. **էթիկական և մասնագիտական վարքագիծ՝** դասախոսը պետք է պահպանի էթիկական և մասնագիտական պահանջները: Նա պետք է պարտավորվի ապահովել անվտանգ, ներառող և աջակցող ուսումնական միջավայր բոլոր ուսանողների համար:

21. Հետագա ուսման հնարավորությունները

Ազգային որակավորումների շրջանակով սահմանված 7-րդ (մագիստրոսի) մակարդակ:

22. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ

Անձի գեղագիտական և բազմակողմանի զարգացման գործընթացում կարևոր դեր է խաղում կերպարվեստ մասնագիտությունը, որպես գեղարվեստական դաստիարակության և գեղագիտական ճաշակի ձևավորման գործոն: Կերպարվեստ առարկան լայն հնարավորություններ է ընձեռում հանրակրթությունում ձևավորել միաջառարկայական կապ, ուսումնական գործընթացը կազմակերպել ստեղծագործական միջավայրում: Ծրագրում ներառված են այնպիսի դրույթներ, որոնք կապահովվեն վերոնշյալը:

Ծրագիրը կարելի է լրամշակել՝ կիրառելով ժամանակակից գեղարվեստական մանկավարժության ձեռքբերումները և տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունները, ինչպես նաև միջազգային փորձի որոշ դրույթներ, որոնք համատեղելի են մասնագիտական կրթական չափորոշիչներին:

Հավելված 1

«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ			
N	**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ և ԻՄԱՑՈՒԹՅՈՒՆ**	**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**
Ա1	Ներկայացնել, մեկնաբանել ՀՀ կրթության քաղաքականությունը, մշակույթի, կրթության, մասնավորապես հանրակրթության բնագավառներին վերաբերող օրենքները, կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերը (հանրակրթության չափորոշիչ, առարկայական («Կերպարվեստ») չափորոշիչ և ծրագիր, ուսումնական պլան), ինչպես մայրենի, այնպես էլ օտար լեզվով	• Ինտերակտիվ դասախոսություն • Ցուցադրություն • Բացատրություն • Սեմինար • Ինքնուրույն ուսումնական նյութի մշակում	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում
Ա2	Ներկայացնել անձին որպես մանկավարժական գործընթացի սուբյեկտ, նրա հոգեբանամանկավարժական, անատոմիաֆիզիոլոգիական, էկոլոգիական և զարգացման տարիքային առանձնահատկությունները, սոցիալականացման օրինաչափությունները, այդ գործընթացի վրա ազդող ներքին (հոգեբանական) և արտաքին (ազգային, համամարդկային, սոցիալ-մշակութային, տնտեսական) գործոնները	• Ինտերակտիվ դասախոսություն • Ցուցադրություն • Բացատրություն • Բանավեճ • Վենների դիագրամ • Սեմինար • Ինքնուրույն ուսումնական նյութի մշակում	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում
Ա3	Ճանաչել և մեկնաբանել գեղարվեստական ստեղծագործության տարբեր տեսակները և ժանրերը տարբեր պատմական ժամանակաշրջաններում մասնագիտական, մանկավարժական գործունեության ոլորտում	• Ինտերակտիվ դասախոսություն • Ցուցադրություն • Բացատրություն • Բանավեճ • Վենների դիագրամ • Սեմինար • Ինքնուրույն	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Գործնական

		ուսումնական նյութի մշակում • Տեսանյութերի դիտում, քննարկում	առաջադրանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում
Ա.4	Մեկնաբանել մանկավարժի, մասնավորապես՝ «Կերպարվեստ» առարկայի ուսուցչի մասնագիտության հիմնական բովանդակությունը, մասնագիտական գործունեության կառուցվածքը, գործառույթները, տարբեր մասնագետների, սոցիալական ինստիտուտների և ծառայությունների, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության բովանդակությունը, իրականացման ուղիները	• Ինտերակտիվ դասախոսություն • Ցուցադրություն • Բացատրություն • Բանավեճ • Վենների դիագրամ • Սեմինար • Ինքնուրույն ուսումնական նյութի մշակում	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում
Ա.5	Մեկնաբանել մանկավարժական տեսությունների զարգացման պատմությունը, պատմական փաստերը, կրթության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, միջգիտակարգային, միջառարկայական կապերը (հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական) և հարաբերությունները, միջմշակութային հաղորդակցման առանձնահատկությունները, հայ կրթական մտքի պատմության, կրթական համակարգերի զարգացման փուլերը, ուսուցման կազմակերպման ձևերը (այդ թվում նաև ներառական), կրթության որակի չափորոշիչները	• Ինտերակտիվ դասախոսություն • Ցուցադրություն • Բացատրություն • Մտագրոհ • Բանավեճ • Տ-աձև աղյուսակ • Սեմինար • Ինքնուրույն ուսումնական նյութի մշակում • Տեսանյութերի դիտում, քննարկում	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում
Ա.6	Մեկնաբանել գրաֆիկական, գեղանկարչական, քանդակագործական աշխատանքներ ստեղծելու մեթոդաբանությունը, թվային գործիքների օգտագործման առանձնահատկությունները,	• Ինտերակտիվ դասախոսություն • Ցուցադրություն • Բացատրություն • Սեմինար • Ինքնուրույն	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի

	սկզբունքները, տեխնիկան, հնարքները ու դրանց կիրառման մանկավարժական պայմանները	ուսումնական նյութի մշակում	գնահատում • Գործնական առաջադրանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում
N	**ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**
Բ1	Կազմակերպել դասավանդողի և ուսումնառողի համատեղ գործունեությունը՝ ապահովելով սուբյեկտ-սուբյեկտային փոխհարաբերություններ, արդյունավետ մանկավարժական հաղորդակցում հանրակրթական դպրոցի «Կերպարվեստ» առարկայի չափորոշիչով և ծրագրով նախատեսված հմտությունների ձևավորման գործընթացում	• Ինտերակտիվ դասախոսություն • Ցուցադրություն • Բացատրություն • Բանավեճ • Դերային խաղ • Սեմինար • Տեսանյութերի դիտում, քննարկում	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում • Պրակտիկայի գնահատում
Բ2	Ձևակերպել «Կերպարվեստ» առարկայի չափորոշիչով և ծրագրով նախատեսված թեմաներով դասերի նպատակները, պլանները, կիրառել դրանց համապատասխան փոխներգործուն մանկավարժական մեթոդներ ու տեխնոլոգիաներ, իրականացնել նախագծային ուսուցում, ուսումնական հետազոտություններ, ինչպես մայրենի, այնպես էլ օտար լեզվով	• Ինտերակտիվ զույց • Ցուցադրություն • Բացատրություն • Դերային խաղ • Ուսումնական նախագիծ • Մոդելավորում • Սեմինար	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում • Պրակտիկայի գնահատում • Նախագծերի գնահատում

Բ3	Կիրառել մասնագիտական մանկավարժական գործընթացում սովորողների գնահատման համակարգի մեթոդաբանությունը, պահանջները և արձանագրել առաջընթացի գրանցման կարևորությունը՝ որպես դասավանդման գործընթացի արդյունավետության ցուցիչ	• Ինտերակտիվ զրույց • Ցուցադրություն • Բացատրություն • Դերային խաղ • Մոդելավորում • Ինքնուրույն ուսումնական նյութի մշակում • Տեսանյութերի դիտում, քննարկում	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում • Պրակտիկայի գնահատում
Բ4	Կիրառել ժամանակակից մանկավարժական, տեխնիկատեխնոլոգիական, ուսուցման արդյունավետ ռազմավարություններ և մեթոդներ, հիմնարար սզբունքներ՝ կազմակերպելով մանկավարժական գործընթաց համընդհանուր ներառականության պայմաններում՝ օգտագործելով «Կերպարվեստ» առարկայի դասագործընթացում կրթության որակի ապահովման չափանիշներն ու չափորոշիչները	• Ինտերակտիվ դասախոսություն • Ցուցադրություն • Բացատրություն • Դերային խաղ • Նախագծի կառուցում • Մոդելավորում • Տեսանյութերի դիտում, քննարկում	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում • Պրակտիկայի գնահատում • Նախագծերի գնահատում
Բ5	Կիրառել կերպարվեստի ուսուցման ժամանակակից մեթոդաբանության հիմնադրույթները՝ համապատասխանեցնելով Հայաստանում և արտերկրում արվեստի, մասնավորապես կերպարվեստի ուսուցման արդի մոտեցումները, հոգեբանամանկավարժական, կրթության փիլիսոփայական ուսմունքների հիմնարար դրույթները և մեթոդները՝ հիմք ընդունելով կերպարվեստի ուսուցման/դասավանդման բազմադարյա ազգային ավանդույթները և պատմական	• Ինտերակտիվ զրույց • Ցուցադրություն • Բացատրություն • Բանավեճ • Վենների դիագրամ • Դերային խաղ • Նախագծի կառուցում • Մոդելավորում • Սեմինար • Ինքնուրույն ուսումնական նյութի մշակում • Տեսանյութերի դիտում,	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում • Գործնական

	նախադրյալները	քննարկում	առաջադրանքի գնահատում • Պրակտիկայի գնահատում
Բ6	Կիրառել «Կերպարվեստ» առարկայի դասագործընթացում սովորողների ստեղծագործական կարողությունների, գեղագիտական ճաշակի ձևավորման ու զարգացման մանկավարժական, առողջապահական տեխնոլոգիաներ՝ ապահովելով դասավանդման գործընթացի որակը, առաջընթացը և սովորողի մասնագիտական աճը	• Ցուցադրություն • Բացատրություն • Դերային խաղ • Նախագծի կառուցում • Մոդելավորում • Տեսանյութերի դիտում, քննարկում	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Գործնական առաջադրանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում • Պրակտիկայի գնահատում
N	**ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ (ՓՈԽԱՆՑԵԼԻ) ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**	**ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ/ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**	**ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**
Գ1	Ցուցաբերել նախաձեռնություն, ուսումնական գործընթացը, խումբը կառավարելու կարողություններ ու գործառույթներ (պլանավորում, կազմակերպում, ղեկավարում, վերահսկում)՝ դրսևորելով ստեղծագործական մոտեցում տարբեր մարտահրավերների ժամանակ, պահպանելով մարդու իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող վարվեցողության, անվտանգության կանոնները և իրավական նորմերը	• Ինտերակտիվ դասախոսություն • Ցուցադրություն • Բացատրություն • Դերային խաղ • Նախագծի կառուցում • Մոդելավորում • Տեսանյութերի դիտում, քննարկում	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում • Պրակտիկայի գնահատում
Գ2	Կիրառել մանկավարժական մասնագիտական աշխատանքում առողջ ապրելակերպի, առողջության	• Ինտերակտիվ դասախոսություն • Ցուցադրություն	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման

	պահպանման գիտելիքներն ու կարողությունները և կրթության առանձնահատուկ կարիքներով սովորողների հետ աշխատանքի կազմակերպման մեթոդաբանությունը	• Բացատրություն • Նախագծի կառուցում • Մոդելավորում • Տեսանյութերի դիտում, քննարկում	գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում • Պրակտիկայի գնահատում
Գ3	Օգտվել տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներից, ծրագրերից (Word, Excel, PowerPoint, CorwelDraw, Photoshop և այլն)՝ պահպանելով տեղեկատվական աղբյուրների օգտագործման բարոյական և իրավական նորմերը, ակադեմիական ազնվության չափանիշները	• Ցուցադրություն • Բացատրություն • Նախագծի կառուցում • Մոդելավորում • Տեսանյութերի դիտում, քննարկում	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում • Պրակտիկայի գնահատում
Գ4	Կառուցել գրավոր և բանավոր խոսքը (մայրենի և օտար լեզվով)՝ դրսևորելով հոգեբանամանկավարժական պատշաճ գրագիտություն	• Մոդելավորում • 5 րոպեանոց ազատ շարադրանք • Ցուցադրություն • Բացատրություն • Դերային խաղ • Նախագծի կառուցում • Մոդելավորում • Տեսանյութերի դիտում, քննարկում	• Կատարված աշխատանքի բանավոր ներկայացման գնահատում • Ստուգողական գրավոր աշխատանքի գնահատում • Ռեֆերատի, թղթապանակի գնահատում • Տեսաներկայացման գնահատում • Պրակտիկայի գնահատում

Հավելված 2

«ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ	**ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔ**

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ																	
	Դասընթացի անվանումը	Գիտելիք և իմացություն						Գործնական մասնագիտական						Ընդհանրական (փոխանցելի)			
		1	2	3	4	5	6	1	2	3	4	5	6	1	2	3	4
1	Հայոց լեզու և գրականություն	+							+								+
2	Օտար լեզու	+														+	+
3	Հայոց պատմություն					+						+		+			
4	Ֆիզիկական դաստիարակություն												+		+		
5	ՏՀՏ հենքային դասընթաց										+					+	
6	Գունանկար, կոմպոզիցիա			+			+	+				+	+				
7	Գծանկար			+			+	+				+	+				
8	Գծագրություն, գծագրական երկրաչափության հիմունքներով					+	+					+	+				
9	Նկարչական նյութերի տեխնոլոգիա			+			+	+				+	+				
10	Հոգեբանություն		+			+		+				+	+				+
11	Հեռանկար					+	+					+	+				
12	Առաջին բուժօգնություն և երեխաների առողջության պահպանման հիմունքներ		+										+		+		
13	Մանկավարժություն	+	+		+	+		+	+	+		+			+		+
14	Հայ և համաշխարհային կերպարվեստի պատմություն			+		+						+					
15	Քանդակ և պլաստիկ անատոմիա			+			+						+				
16	Գրքի գեղարվեստական ձևավորում			+			+						+				
17	Փիլիսոփայություն		+			+						+					+
18	Ընտրովի դասընթաց* ՄՀ-ից																
19	Ընտրովի դասընթաց 1* ՀՍՏ-ից		+												+		+
20	Ներառական կրթություն	+	+			+									+		
21	Կերպարվեստի դասավանդման մեթոդիկա	+			+			+	+	+	+		+				
22	Ընտրովի դասընթաց 1*մասնագիտական																

23	Ընտրովի դասընթաց 2* ՀՍՏ-ից		+												+		+
24	Հաստոցային գրաֆիկա			+			+				+	+					
25	Արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանության հիմունքներ		+										+		+		
26	Բնապահպանություն և շրջակա միջավայրի խնդիրներ	+	+											+			
27	Համակարգչային գրաֆիկա						+				+					+	
28	Հակակոռուպցիոն քաղաքականության հիմունքներ													+			
29	Կուրսային աշխատանք								+						+		+
30	Ամփոփիչ ատեստավորման նախապատրաստում																+
31	Մանկավարժական պրակտիկա																
32	Մանկավարժական-ուսումնական պրակտիկա (պլեներ)																
33	Ամփոփիչ ատեստավորում																

* Ընտրովի դասընթացները կարող են փոփոխվել յուրաքանչյուր կիսամյակ՝ ՄԿԾ-ի ձևակերպված կրթական ելքային արդյունքների հաշվառմամբ:

Հավելված 3

«Կերպարվեստ» բակալավրի կրթական ծրագրի ուսումնական պլանը
ԲԿԾ <u>առկա</u> ԲԿԾ <u>հեռակա</u>

Հաստատված է ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի խորհրդի

/ 30.08 / 2018թ. թիվ 12 նիստում

Դեկան _____ Ա. Հակոբյան